РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРАГАЦОТН
ОБЩИНА ШАМИРАМ

ARAGATSOTN REGION
SHAMIRAM
MUNICHIPALITY

Հ Հ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Моб. / 093/434358 /
mraz.broyan@mail.ru

N 44 ,,18,, 08 ,, 2011թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Ուղարկվում է Շամիրամ համայնքի ավագանու 29.07.2011 թ. ն-7 հերթական նիստի արձանագրության որոշումը առ դիր 9 թերթից:

ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Հ. ԲՐՈՅԱՆ

Ելք—
<< Արագածոտնի մարզի
աշխատակազմի քաղաքաշինության
բաժին ընդհանուր բաժին
«—» 20 թ.
Մուտք № —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔ

29. հուլիսի 2011թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Համայնքի ղեկավարի իրավերով ավագանու նիստին մասնակցում էր, համայնքի ղեկավարի տեղակալ Թոսուն Քոչոյանը, հաշվապահ Ռուզաննա Հովսեփյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Մրազ Բրոյանը.
Նիստը արձանագրում էր քարտուղար Յուղաբեր Աբգարյանը.

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29 –Ի ԹԻՎ - 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՅՈՒՂԱԲԵՐ ԱԲԳԱՐՅԱՆ/

1. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման վիճակի մասին.
2. Հայաստանի Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում հնարավոր փոփոխությունների դեպքում բնակչությանն իրազեկելու մասին:
3. Համայնքի սեփականություն համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը պարտքի դիմաց օտարման միջոցով Հայաստանի Հանրապետության հանձնելու մասին:
4. Համայնքի ղեկավարի 2011 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 1/

Լսեցին

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման վիճակի մասին.

/ԹՈՍՈՒՆ ՔՈՉՈՅԱՆ/

Այս տարվա գարնանային խիստ կլիմայական պայմանները վնասակար ազդեցություն թողեցին համայնքի ցանքատարածությունների վրա: 100 % պտղազրկվեցին կորիզավոր ծառերը,

հնդավորները՝ տուժվեցին շուրջ 70 % : Բավականին շատ կորուստներ եղան հացահատիկային և կերային կուլտուրաների ցանքատարածություններում: Մի շարք աշնանացանի և գարնանացանի տարածքների հասքերը լրիվ զրկվել էին գլուխներից՝ ուժեխ կարկտահարության պատճառով: Ինչ վերաբերվում է անասնապահությանը ապա ցավով և ափսոսանք պետք է նշեմ, որ դեղնախտ կոչվող վարակիչ հիվանդության պատճառով մասամբ նվազեց անասնագլխաքանակը և դրանից կախված՝ պակասեց մթերատվությունը: Մնացած գյուղ մթերքները իրացվել և իրացվում է ժամանակին և կանոնավոր ձևով: Անասնապահական մթերքների պակասության և հիվանդությունների ծագման պատճառը հիմանականում հանդիսանում է համայնքում մշտական անասնաբույժ չունենալը:

Առաջարկել համայքնի ղեկավար Մ. Բրոյանին լուրջ ուշադրություն դարձնել համայնքին անասնաբուժական ծառայություններով ապահովելու և հսկողություն սահմանել այդ ուղությամբ կատարվող աշխատանքների վրա:

Կողմ – 5 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 2-/

Լսեցին

Հայաստանի Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում հնարավոր փոփոխությունների դեպքում բնակչությանն իրազեկելու մասին:

/ՂԵԿ. ԹՈՍՈՒՆ ՔՈՉՈՅԱՆ/

2011 թվականին տարեսկզբից թե Հ Հ օրենքներում և թե կառավարության որոշումներում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, հատկապես՝ բնակչության սոցիալ տնտեսական և գյուղատնտեսության ոլորտներին վերաբերվող հարցերում: Կառավարության համապատասխան որոշումով իջեցվեց գյուղատնտեսությանը տրվող բանկերի կողմից սահմանված տոկոսադրույքը՝ նախկին 22-ից 24 %-ի դիմաց գյուղատնտեսության զարգացման և գյուղացու վիճակի թեթևացման նպատակով սահմանվեց վարկերի հատկացման 10% տոկոսադրույք, իսկ լեռնային և նախալեռնային համայնքների բնակիչների համար մինչև 8%: Բացի այդ, ուշադրություն դարձվեց պարարտանյութերի գնաճի նվազեցման և գյուղի համապատասխան սերմացույով ապահովելու բնագավառների վրա: Այս և այլ փոփոխությունների մասին ժամանակին տեղյակ է պահվել համայնքի բնակչությունը:

Առաջարկել համայնքի ղեկավար Մ. Բրոյանին և ավագանու բոլոր անդամներին Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին ժամանակին իրազեկել բնակչությանը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 3/

Լսեցին

Համայնքի սեփականությունը համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը պարտքի դիմաց օտարման միջոցով Հայաստանի Հանրապետության հանձնելու մասին:

/ՁԵԿ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ/

Ձեզ քաջ հայտնի է, որ համայնքի ոռոգման ցանցի նորոգման աշխատանքները բազմաթիվ չարչարանքներից հետո վերջապես հաջողվեց իրականացնել «Հազարամյակի մարտահրավեր-

Հայաստան ՊՈԱԿ» -ի ծրագրի միջոցով: Վերջին երկու-երեք տարիների ընթացքում մեր հույսը կտրելով վերադաս մարմինների կողմից մեզ ընդառաջելու պատրաստակամությունից, սեփական բյուջեի միջոցներից ծախսել ենք մոտ 22 մլն Հ Հ դրամ՝ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման, կենցաղի տան հիմնանորոգման, լճակների կառուցման, ոռոգման ցանցի նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման և նորոգման , խմելու լրացուցիչ ջրագծի անցկացման և վթարների վերացման համար: Այսքանից հետո մենք այլևս չունենք հնարավորություններ և միջոցներ ոռոգման ցանցի հիմնանորոգման 15 % համաֆինանսավորման վճարումները կատարելու համար: Ուստի ստիպված պետք է դիմենք հետևյալ քայլին: Ձեզ հայտնի է, որ համայնքի գյուղապետարանի շենքը իր տարածքով արդեն 6 տարի է, որ օգտագործվում է դպրոցի կողմից: Մեզ մնում է այդ շենքը իր տարածքով օտարման միջոցով հանձնել Հայաստանի Հանրապետությանը, վերը նշված համաֆինանսավորման պարտքերը վճարելու համար: Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 –րդ հոդվածի 12, 13 -դ կետերը և համայնքի ղեկավար Մ. Բրոյանի առաջարկը

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի սեփականություն համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը օտարման միջոցով հանձնելու Հայաստանի Հանրապետությանը, ներհամայնքային ոռոգման ցանցի հիմնանորոգման 15 % համաֆինանսավորման գումարի պարտքը ամբողջությամբ փակելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 4/

Լսեցին

Համայնքի ղեկավարի 2011 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

/ՁԵԿ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ/

Ղեկավարվելով Հ Հ սահմանադրության և Հ Հ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի մի շարք հիմնախնդիրներ ստացել են իրենց լուծումները:

1. Երկրորդ եռամսյակում հրավիրվել են ավագանու երեք նիստեր, որից մեկը՝ արտահերթ.
2. Երկրորդ եռամսյակում իմ կողմից ընդունվել են երեք որոշումներ և տրվել՝ հինգ հրամաններ.
3. Կազմակերպվել է բազմաթիվ փաստաթղթերի և նրանց կրկնօրինակների տրամադրումն համայնքի արխիվից.
4. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, տրվել է դիմումներին և բողոքներին լուծման պատասխաններ.
5. Կատարվել է հողի հարկի գանձում՝ 630000 Հ Հ դրամ և գույքահարկի գանձում 300000 Հ Հ դրամ.
6. Պաշտպանության բնագավառում աջակցել ենք զորակոչի.
7. Ինքնակամ շինարարության կանխանգելումներ չեն եղել, դրանց բացակայության հետևանքով.
8. Կատարվել է փողոցների մասնակի աղբահանություն և նորոգման մի շարք աշխատանքներ.
9. Հողի օգտագործման բնագավառում խախտումներ չենք հայտնաբերել.
10. Մշակույթային բնագավառում՝ արդեն ավարտին է հասնում մշակույթի տան հիմնանորոգումը, իսկ կենցաղի տան նորոգումը արդեն ավարտված է.

11. Առողջապահության բնագավառում՝ համայնքին սպասարկվող բուժ ամբուլատորիան տեղափոխել է նորոգված մշակույթի տան շենքը.
12. Եղել են էլեկտրոմատակարարման խափանումներ և խմելու ջրագծի վթարներ, սակայն դրանք ժամանակին վերացվել են.
13. Ոռոգման ցանցի նորոգումն ընթացքի մեջ է և շուտով կավարտվի: Մեր կողմից առաջարկություն է արվել ավագանուն համայնքի գյուղապետարանի վարչական շենքի օտարման մասին, որի հասույթի դիմաց կկարողանանք փակել պետության հանդեպ ունեցած ոռոգման ցանցի նորոգման համար անհրաժեշտ 15 % համաֆինանսավորման պարտքի գումար.

Համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի 2011 թվականի երկրորդ եռամսյակի կատարած աշխատանքները համարել բավարար:

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 5/

Համայնքի ավագանիներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստը արձանագրեց Յուղաբեր Արգարյանը .....

2011թ. հուլիսի 29
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2011թ. N 1

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29 – Ի ԹԻՎ - 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 12-րդ հոդվածի համաձայն *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Գյուղատնտեսական մթերքների արտադրության և իրացման վիճակի մասին.
2. Հայաստանի Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում հնարավոր փոփոխությունների դեպքում բնակչությանն իրազեկելու մասին:
3. Համայնքի սեփականություն համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը պարտքի դիմաց օտարման միջոցով Հայաստանի Հանրապետության հանձնելու մասին:
4. Համայնքի ղեկավարի 2011 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասպանյան Պրիսկա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԲՐՈՅԱՆ

2011թ. հունիսի 29
գ. Շամիրամ

Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29 հունիսի 2011թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1.1.2.կետերի պահանջներով համայնքի ավագանին որոշում է

1. *Առաջարկել համայքնի ղեկավար Մ. Բրոյանին լուրջ ուշադրություն դարձնել համայնքին անասնաբուժական ծառայություններով ապահովելու և հսկողություն սահմանել այդ ուղությամբ կատարվող աշխատանքների վրա:*

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ
Քյալաշյան Տոսուն
Աղեյան Ռուստամ
Շարոյան Ռուստամ
Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011թ. հունիսի 29
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2011թ. N 3

Հայաստանի Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում հնարավոր փոփոխությունների դեպքում բնակչությանն իրազեկելու մասին

1. *Առաջարկել համայնքի ղեկավար Մ. Բրոյանին և ավագանու բոլոր անդամներին Հանրապետության օրենքներում և կառավարության որոշումներում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին ժամանակին իրազեկել բնակչությանը:*

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011 հունիսի 29
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2011թ. N 4

Համայնքի սեփականությունը համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը պարտքի դիմաց օտարման միջոցով Հայաստանի Հանրապետության հանձնելու մասին:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 –րդ հոդվածի 12, 13 -դ կետերի պահանջներով համայնքի ավագանին *որոշում է*

1. *Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի սեփականություն համարվող գյուղապետարանի վարչական շենքը և շենքի սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասը օտարման միջոցով հանձնելու Հայաստանի Հանրապետությանը, ներհամայնքային ոռոգման ցանցի հիմնանորոգման 15 % համաֆինանսավորման գումարի պարտքը ամբողջությամբ փակելու համար:*
2. *Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:*

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011 մարտի 29
գ. Շամիրա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2011թ. N 5

Համայնքի ղեկավարի 2011 թվականի երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրության և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքովի 16 –րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին *որոշում է՝*

1. *Համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի 2011 թվականի երկրորդ եռամսյակի կատարած աշխատանքները համարել բավարար:*

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տրուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2011 հուլիսի 29
գ. Շամիրա